ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 07.12.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան համայնքի 2020թ. ճշտված բյուջեով զբոսաշրջության զարգացման նպատակով նախատեսված է 23,950.0 հազ. դրամ և հաշվի առնելով 2020թ. COVID-19 հիվանդության գործոնը և դրա հետևանքը Երևանի տնտեսությունում՝ ծրագրի իրականացումը տեղի չի ունեցել:

Երևան համայնքի 2021թ. բյուջեի նախագծով՝ զբոսաշրջության զարգացման նպատակով նախատեսվել է 59,600.0 հազ. դրամ, որն իր մեջ ներառում է նաև թեմատիկ զբոսաշրջային երթուղիների իրականացում, իսկ Երևան համայնքի 2021թ. բյուջեով հանրային զուգարանների մասով՝ արդեն առանձին ծրագրով, նախատեսվում է կառուցել 1 հանրային զուգարան՝ Արաբկիր վարչական շրջանում:

Երևան համայնքի 2021թ. բյուջեի նախագծով նախատեսված է «Երևան Սիթի Տուր» զբոսաշրջային ավտոբուսի վերաբրենդավորում, ինչպես նաև «Երեկոյան Երևան» երթուղիների մշակում և իրականացում, հետիոտնային տուրերի (walking tours) կազմակերպում:

Երևան համայնքի 2021թ. բյուջեի նախագծով նախատեսված չէ վերակառուցել և արդիականացնել Հաղթանակի զբոսայգին, քանի որ այն ընդգրկված է Երևան քաղաքի ներդրումային ծրագրերում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ